.

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Մ. ՄԱՆՐԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մանրիկյան.

Ի պատասխան Ձեր 15.07.2019թ. հ. 01/75Մ գրության՝ տեղեկացվում է.

Վարդաշենի 6-րդ փողոցի հ.66/1 և հ.68ա հանրակացարանային շենքերը հաշվառված են քաղաքապետարանի 3-րդ աստիճանի վնասվածության, ամրացման ենթակա բազմաբնակարան շենքերի ցանկում, որում ներառված է ընդհանուր թվով 107 բազմաբնակարան շենք, որոնց վերականգնման և ամրացման աշխատանքները հնարավոր կլինի իրականացնել Երևան համայնքի բյուջեով համապատասխան ծրագրերի և ֆինանսական միջոցների առկայության կամ մասնավոր կառուցապատողներ ներգրավելու դեպքում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ շենքերի տեխնիկական վիճակի հետազոտման աշխատանքներն ըստ նորմերի կատարվում են նախորդ հետազոտումից հետո 8-10 տարի ժամանակահատվածում: Վարդաշենի 6-րդ փողոցի հ.66/1 շենքում հետազոտման աշխատանքները վերջին անգամ իրականացվել են 2015թ. դեկտեմբերին՝ «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի կողմից, իսկ հ.68ա շենքում 2016թ. մայիսին՝ «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից:

Բացի այդ՝ նշված շենքն ամրացնելու նպատակով Պետական գույքի կառավարման կոմիտեն դիմել է ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ Վարդաշենի 6-րդ փողոցի հ.66/1 շենքը ՀՀ կառավարության 2018-2020թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի նախագծի «Բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացում-վերականգնում» ծրագրում ընդգրկելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ